Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2020 թ.
ապրիլի 9 -ի N 211 - Ա
որոշման

«ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՎԻ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է «Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարան (Աստվածաբանական համալսարան)» ՀՄ-ի ուսանողների համար կազմակերպել անգլերեն լեզվի դասընթացներ՝ համաձայնեցված ուսանողների կրթական և մասնագիտական պահանջներին:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	Հայկական բարեգործական ընդհանուր միություն (ՀԲԸՄ), 55 Արևելք, 59-րդ փող. Նյու Յորք, NY 10022-1112:
4.	Ծրագիրը կատարողը	Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) Հայաստանի ներկայացուցչություն (ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 40, ՀՎՀՀ 00006479):
5.	Ծրագրի իրականացման վայրը և ընագավառը	Հայաստանի Հանրապետություն, ք. Վաղարշապատ, կրթական:
6.	Ծրագրի բյուջեն	6 264 000 դրամ:
7.	Բարեգործություն ստացողը	«Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարան (Աստվածաբանական համալսարան)» ՀՄ-ի (ՀՀ. ք. Վաղարշապատ 1101, ՀՎՀՀ 04717629) ուսանողները:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2020թ. ապրիլի 6-ից մինչև դեկտեմբերի 30-ը:

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի շրջանակներում Հայաստանի ամերիկյան համալսարանի «Անգլերենի՝ որպես օտար լեզվի մագիստրոսական ծրագրի և Կիրառական լեզվաբանության հետազոտական կենտրոն»-ի կողմից «Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարան (Աստվածաբանական համալսարան)» ՀՄ-ի ուսանողներին դասավանդվելու է անգլերեն լեզու սկզբնական (սկսնակ և տարրական), միջին (միջին թույլ և միջին) և բարձր մակարդակներով՝ կախված ուսանողի գիտելիքների ստուգման արդյունքներից: Դասընթացները նախատեսված են բակալավրի ծրագրում ընդգրկված բոլոր ուսանողների համար, իսկ մագիստրատուրայի ուսանողներին դասավանդվելու են TOEFL քննության նախապատրաստական դասընթացներ: Լեզվի դասավանդումը իրականացվելու է երկու փուլով. առաջին փուլը՝ ապրիլի 6-ից հունիսի 30-ը, երկրորդ փուլը՝ սեպտեմբերի 1-ից դեկտեմբերի 30-ը: Յուրաքանչյուր փուլ ընդգրկում է շաբաթական 2 դասընթաց բոլոր մակարդակներում, յուրաքանչյուր դասընթացը 2 ակադեմիական ժամ տևողությամբ: Դասընթացների ընդհանուր բյուջեն երկու փուլերի համար կազմում է 6 264 000 (վեց միլիոն երկու հարյուր վաթսունչորս հազար) դրամ՝ առանց ԱԱՀ:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Հայաստանի ամերիկյան համալսարանին պատվիրել ներքոգրյալ ծառայությունները, որոնց ընդհանուր արժեքը կազմում է 6 264 000 դրամ՝ առանց ԱԱՀ. - բակալավրի ծրագրում ընդգրկված ուսանողների համար անգլերեն լեզվի դասընթացների կազմակերպում և անցկացում, ինչպես նաև TOEFL քննության նախապատրաստական դասընթացներ մագիստրատուրայի ուսանողների համար:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ մարմինների հետ	Չի նախատեսվում:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Յուրաքանչյուր դասընթացի սկզբում և ավարտին մասնակիցները հանձնելու են գիտելիքի ստուգման թեստեր՝ գնահատելու համար մասնակցի առաջադիմությունը:

		Հաշվետվություններ են ներկայացվելու Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) կենտրոնական վարչության և ՀՀ կառավարության 2003 թ. հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ